

կաշխատեն ձեռք բերել որտեղ եւ գտնեն։ Հին հայրապետներ
 րից սովորութիւն եղած է պահելու, թէ եւ հատարակ ձեռք
 կոնդակները, բայց հետզհետեւ թաւանալով, վերջը ամփոյթ
 մնացել են եւ յետոյ զանազան մարդիկների ձեռքն ընկնելով
 յափշտակված կերելին, եւ այսօր նոցա սեւագործութիւնների
 անբաղդ արար մերկ եւ թափու թէ իջմիածնիւր։ Ոչ միայն ժա-
 մանակով առաջ գահակալած հայրապետների, այլեւ մենք չու-
 նինք ամբողջապէս վերջին կաթողիկոսների կոնդակների եւ
 նամակների սեւերն անգամ՝ բացի քանի մի աննշան թղթերից,
 որոնք կան իջմիածնի արխիվի մէջ։ Ուրեմն թէ այս կողմից եւս
 որպիսի երախտագիտութիւն եւ շնորհակալութիւն չայլ է
 ներկայ վեհափառ Գէորգ Դ. իմաստուն Կաթողիկոսին, որ
 պատմական խորհուրդ ունեցող սովորութիւն արած է, ահա
 տասն եւ երկու տարի է, իւր Գահակալութեան օրից, Կ. Պօլսից
 սկսած, իւր ամենայն կոնդակների, նամակների առ կառավար-
 ութիւնն թէ Ռուսիայի թէ օտարերկրեայ Պարսկաստանի եւ
 Տաճկաստանի, առ մեծամեծ պաշտօնեաներ եւ այլն կրկին պատ-
 ճէններ ունենալու եւ պահպանելու, անկեղծ հայասէր գնա-
 հատօղներին կթողնենք։ Վեհափառ Հայրապետը երկու օրի-
 նակով կալահէ իւր թղթերը մին՝ իբրեւ դիւանական գործ,
 բոլոր գրագրութիւնները թարգմանութիւնների հետ (որոնք
 օտար լեզուներով են ստացված) եւ իւր պատասխանների սեւա-
 գրութիւններ, եւ միւսը՝ առանձին տուժարներով խրատակն-
 չիւր տարվան առանձին կազմված հայերէն պատճէնները, նա-
 մակների առ կառավարութիւնն, Բ. շրջաբերական կոնդակների
 եւ խրատների առ ժողովուրդն, Բ. բարեկարգութիւնների հրա-
 հանգների եւ պատուէրների առ Ս. Սինօդն զանազան զեպծ-
 մունքի վերաբերմամբ, Գ. օրհնութեան կոնդակների առ մար-
 նաւոր անձներ, Ե. զանազան նամակների, մինչեւ անգամ հե-
 ռապիւնների իւրաքանչիւրն առանձին թուահամարով։ Թէ սա
 որքան օգուտ բերելու է մեր պատմութեանը, ի հարկէ ժամա-
 նակը պիտի ճոյց տայ։ Հազարամիջո միլիարդ միաստալս
 Առ այժմ կասենք, որ մենք չգիտէինք այս գեղեցիկ դո-
 ծը, եւ ինչպէս եւ չգիտէի մինչեւ ցարդ, նոյնպէս կթողի թէ
 չգիտեն գրեթէ եւ բոլոր Հայերը, որոնց առանձին միւթաբա-
 կան տեղեկութիւն տուած կհամարինք, հաղորդելով ահա՛ Վե-
 հափառ ազգասէր Կաթողիկոսիս այս հեռատես տնօրէնու-
 թիւնը, որ իւր փառաւոր գահակալութեան ամմահ յիշատակն
 եւս պիտի լինի որ Ս. իջմիածնի մէջ գեղեցիկ եւ հարուստ
 տպարան հաստատելով եւ բացի ամսագրից՝ արժանաւոր հը-
 նութիւններ հրատարակել հրամայելով իմաստնաբար կհզգայ
 հինը եւ նորը միանգամայն։ Սա ակամայ միտքաւ կբերէ առ
 հայրենասէր իշխան Սահակ Բագրատունին ուղղած խորէն գիւղի
 մեր սիրած ամմահ ծերունի Մովսէսի սրտաբուղիխօսքերը, որ

իւր քնածին անկեղծութեամբ եւ քարեօրութեամբ կրկնելով նուիրելու էր մեր հայրենասէր Ազգայնական եւս. Առ որով տեսանեմ եւ զայս, զի եթէ որք յառաջ քան զմեզ եւ կամ առ մեօք եղեն հարուստք եւ իշխանք աշխարհիս Հայոց, ոչ ընդ ձեռամբ անկելոյ խրեանց արդեօք գտելոց իմաստնոց զայսպիսեացս հրամայեցին կարգել գլխատակս բանից, եւ ոչ արտաքուստ ուստեք այսօցիկ ի ներքս ածել խորհեցան օժանդակութիւն իմաստից, եւ զքեզ այսպիսի այժմ եղեալ ծանեաք, ապա յայտ է ուրեմն, թէ ամենեցուն քան զքեզ նախագունիցն ճանաչիս վեհագոյն, եւ բարձրագունից արժանաւոր գովութեանց, եւ յայսպիսիս պատկանաւոր գնիլ յարձանագրութիւնս բանից:

Վեհափառ Կաթողիկոսը իւր սակաւապէտ եւ խնայող բնաւորութեամբ ոչ միայն առանձին զիւանապատուն չունի իւր համար, այլ չունի իւր մասնաւոր քարտուղարն անգամ եւ իւր գործերն ինքն անձամբ կկատարէ եւ կամ կհրամայէ կատարել զանազան գէպերեւմ, որոնց արժան կհամարէ յանձնել Սակայն որքան ահա մերձաւոր կերպով ականատեօ կլինինք ամենօրեայ գործավարութեանը, չասենք արդեօք համարձակ թէ գիւանապետներն իշխանութեան ներքոյ ունեցող աշխարհիս մեծամեծների դիւանաւանների հետ կերպով իմն մեղել դարձ է Վեհ. Կաթողիկոսի Հայրապետական գործերի եւ կոնդակների դրութիւնը, որ տեսնված չէ ցայժմ, որ պահպանվին այնպիսի ամբողջութեամբ եւ կարգաւորութեամբ առանձին թուահամարներով եւ առանձին ելեւմտական մատեանների մէջ թէ պատճեններ, թէ զանազան գրագրութիւնների բովանգակութիւն եւ այլն, որ բազմաչափաւ Հայրապետիս անձնակառ հագադարութեան, տնօրէնութեան եւ ցուցման արդասիքն է անշուշտ:

Յանկալի կլինէր ի հարկէ Հայրապետական կոնդակների եւ կարգաւորութիւնների հրատակութիւնը ամբողջութեամբ տեսնել, որ ներկայ ժամանակիս ազգի եւ եկեղեցւոյ ճշգրիտ պատմութիւն պիտի համարվի, իսկ մինչեւ նոցա ամբողջ հրատարակութիւնը, մենք կցանկայինք երբեմնապէս գտնէ, Վեհափառ Հայրապետի բարեհաճութեամբ, քաղուածօրէն հրատարակել ամսագրի մէջ, շրջաբերական այն կոնդակները միայն որոնք կվերաբերվին զպրօցների, եկեղեցիների բարեկարգութեանը եւ առհասարակ ժողովրդի կեանքի բարւոքմանը, որ ամենքն աչքի առաջ ունենան նոցա, ոմանք ի տեղեկութիւն եւ ոմանք որոնց հարկ է, ի գործագրութիւնն նոյն փրկաւէտ հրահանգները առանց մոռացման տալու, ինչպէս որ կնկատվի շատ տեղերում, մինչեւ անգամ կարծեաւ անձանօթ լինելով նոյն հրահանգներին նոքա, որոնք պիտի գործագրէին եւ հսկող լինէին գործագրութեանը:

Վեհափառ Հայրապետը բարեհաճեց շնորհել մարտ ամսի մէջ տոգրալին գործերի վերաբերմամբ հետեւեալ Կոնդակները:

Կոնդակ Դանիէլ քահանայ Մինասեանի, Յովսէփ Մուրա-
տեանի, Վարդան Դէորդեանի, Յովսափ Խաչատուրեանի եւ
Բարսեղ Դիւանեանի անունով, որով կհաստատէ նոյա թէջուս
գիւղի Դպրոցի Հոգաբարձութեան պաշտօնի մէջ, մարտի 3,
1879, թ. 73:

Կոնդակ Վարդան քահանայ Ալվազեանի, Մկրտիչ Ղարապետ-
անի, Գրիգոր Ամիրեանի եւ Սահակ Թովմասեանի անունով, որով
կհաստատէ նոյա Ղլլթամիւր գիւղի Դպրոցի Հոգաբարձու-
թեան պաշտօնի մէջ, մարտի 19, 1879, թ. 112:

Կոնդակ Էվջիրսը գիւղի Ժողովագրի անունով, որով կհաս-
տատէ տեղին Դպրոցի Հոգաբարձութեան պաշտօնի մէջ Սով-
սէս քահանայ Տէր Յովհաննիսեանին, Յարութիւն Խորայէլեա-
նին, Գրիգոր Խաչատուրեանին, Եարազ Սահակեանին եւ Կա-
րապետ Յակոբեանին: փետրվարի 23, 1879, թ. 62:

Կոնդակ մոզգոկեցի մեծապատիւ Ստեփաննոս Բաղդասա-
րեան ներսէսեանի անունով նուիրելուն համար մի արծաթեայ
ոսկեզօծ տապանակ ընդելուզեալ մենէյիւ եւ սպիտակ ակամբ:
ի յիշատակ իւր հանգուցեալ Յուլիանեայ կնոջ: Յովհաննէս աւագ
քահանայ Խոսրովեանի յորդորմամբ, փետրվարի 27, թ. 64, 1879:

Կոնդակ Աղէքսանդր Մկրտչեան Թահիրեանի անունով, Մեծ
Ղարաքլիսայից, որով կօրհնէ եւ կկարասուսէ նորան չորս հա-
զար ռուբլս համար: որ նուիրած է նա Կեղին Հայ Դպրոցին:
մարտի 21, 1879, թ. 114:

Կոնդակ յանուն Նոր Բայազետի նորրնտիր Մարգասիրական
Ընկերութեան յանուն սրբոյ Թարգմանազ, որով կհաստատէ
իւրեանց նոր պաշտօնի մէջ, մարտի 22, 1879, թ. 118:

Նախափառ ընկերութեան — Յարութիւն Մամիկոնեան:
Գանչապահ — Պօղոս Դօլլաթեան:

Բարսեղ — Հայրապետ Խաչատուրեան:
Տէս — Կարապետ Տէր Սահակեան:

Հոգաբարձուներ — Մատթէոս մահտեսի Սփրիկեան եւ Խաչա-
տուր Բուզուկեան: